— Հայ-բողոքականները միայն գիտեն իրանց հասարակութեան անունով խօսել եւ ամէն դէպքում կրկնել. «մենք սուտ խօսելու սովորութիւն չունենք», թէեւ ամէնից շատ սուտ խօսողները իրանք են:

Եւ իրաւ, նա հայ-բողոքական էր:

Իր այրական հասակում նա թողել էր լուսաւորչական եկեղեցին եւ ընդունել բողոքականութիւն: Նրա Երուսաղէմի ուխտագնացութիւնը կատարել էր այն ժամանակ, երբ ինքը դեռ հաւատում էր սուրբերի բարեխօսութեանը: Իսկ այժմ հաջի Իսաղը շատ անգամ մի առանձին զղջումով ասելու սովորութիւն ունէր, որ եթէ հնար լինէր, մեծ ուրախութեամբ իր բազուկների կաշին կը պոկէր, որ այն աւելորդապաշտութեան նշանները չմնային նրա մարմնի վրայ:

Այնօր մենք պէտք է թողնէինք Բաղէշը, այդ պատճառով մեզանից իւրաքանչիւրը շտապում էր իր գործերը վերջացնել: Սենեակի դուռը կողպեցինք, երեքս էլ դուրս եկանք: Ասլանը Ջալլադի հետ գնացին մի քանի այցելութիւններ անելու, իսկ ես գնացի շուկայ՝ մի քանի իրեղէններ գնելու:

Քաղաքի գեղեցկութիւնը ինձ մոռանալ տուեց հաջի Իսաղի թողած անախորժ տպաւորութիւնը: Հազիւ թէ կարելի է գտնել մի քաղաք, որ Բաղէշի նման ինքնուրոյն ձեւ ունենայ, եւ հազիւ թէ մի որեւէ այլ տեղ բնութիւնը ստեղծագործել է այնպիսի դիրքեր, որ քաղաքին տուել են այն ինքնուրոյն ձեւը:

Պատմական Սալնո-ձորը իր բարձր, ալիքաւոր լեռներով ու բլուրներով սեղմել է իր գրկի մէջ այդ քարեղէն քաղաքը: Ասում եմ քարեղէն, որովհետեւ բոլոր տները, թէ հարուստի, թէ աղքատի, շինուած են մաքուր, հարթ տաշուած, թխագոյն քարից: Երեք գետեր, զանազան կողմերից գալով եւ քաղաքի մօտակայքում միանալով, անցնում են ձորի անդնդային խորութեան միջով եւ իրանց ահեղ ձայնով թնդեցնում են տիրող լռութիւնը: Սկսեալ ձորի յատակից, սկսեալ գետի աջ եւ ձախ ափերից, շրջակայ լեռները սանդղտաձեւ թումբերով (տերրասներով) աստիճանաբար վեր են բարձրանում: Այդ թումբերի վրայ շինուած են տներ, այդ թումբերի վրայ տնկած են եւ տները շրջապատող պարտէզները: Երբ ցածից դէպի վեր ես նայում, քեզ թւում է, թէ տեսնում ես Շամիրամի օդային պալատները իր կախաղանաւոր պարտէզներով:

Լեռների կուրծքի վրայ, սկսեալ ամենաբարձր կէտերից, վազում են բազմաթիւ աղբիւրները, յստակ, իբրեւ բիւրեղ: Նրանց վտակները անցնում են բարձրադիր պարտէզների միջով, անցնում են տների կտուրների վրայով